# Սայաթ Նովա

## Մոտրդ նըստողը կու հարփի

Էսպես Արութինի ասած,

Մոդրդ նըստողը կու հարփի՝ դուն բանգ ու բոզա իս, ա՛զիզ:
Դիվանա Փահլուլ կու շինիս, տեսնողին՝ ազա իս, ա՛զիզ.
Ինչ տիղ կու լիս շնուք կու տաս՝ մեջլիսի մազա իս, ա՛զիզ.
Մազեն մե սահաթ լավ կու լի, դուն համան թազա իս, ա՛զիզ:

Մե խոսկըդ կանց շաքար քաղցըր, մե խոսկըդ վառ՝ քուրա-քուրա.
Մե նըմանըդ ռաշի նըման, մե նմանըդ, ջուրա-ջուրա.
Մարքարիտով լիքը կալ իս, սադափնիրըդ թուրա-թուրա.
Էրծաթե կոխպեքով կոխպած, դուն օսկե ռազա իս, ա՛զիզ:

Էրեսըդ առուտվան արիվ՝ քանի կէհա կու զարգա՛նա.
Թաքավոտի քարխանի զար՝ ծառը ծառեն չի՛ թարգանա.
Թե սուչ ունենամ սըպանե, թե չէ նա հախ մի՛ բարգանա.
Մե ձեռրդ ջուր, մե ձեռրդ արուն՝ ջալլաթի ջազա իս, ա՛զիզ:

Տեսնողը նաղշրդ կու տընդդե էն թավուզի բըմբուլի պես,
Ձընի տակ են նուր դուս էկած, արիվ դիբած սընբուլի պես.
Թուղ վրետ թալով պտուտ գամ, վարթի կարոտ բըլբոդի պես,
Դուն ինծ շուտով մի՛ թըռցընի շավարդան-բազա իս, ա՛զիզ:

Էշխեմեդ հիվանդացիլ իմ, վո՞ւնց զարար, վո՞ւնց շահ ին ասում.

Հեքիմնիրը ափսուսում ին՝ ծընգան տալով վա՛յ ին ասում.
Կանչողը դարդակ է գընում «ա՛խ, Սայաթ Նովա» ին ասում.
Թաք դուն դիս գաս վիր կու կենամ, թե սազիս՝ սազա իս, ա՞զիզ: